




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կոմս Միքայէլ Տարե-
լովի Լօրիս-Մէլիքով. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանսական ընտրութիւնները. Ար-
տաքին Լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Նամակներ թիւրքաց Հայաստանից.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ՄԻՔԱՅԷԼ ՏԱՐԵԼՈՎԻՉ ԼՈՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎ

Պետերբուրգի մէջ հրատարակող «Русская
Старина» ամսագրի ներկայ տարվայ սեպտեմբե-
րի գրքոյկում այդ վերնագրով տպագրված է մի
բաւական մեծ յօդուած, Ն. Ա. Բէլօգօւ-
վի ստորագրութեամբ: Քաղաւ Ենք այդ յօդ-
դուածից մի քանի տեղեկութիւններ, ենթադրե-
լով որ դա անհետաքրքիր չի լինի «Մշակի»
ընթերցողների համար:

Յօդուածը դասաւորված է խրոնօլոգիական
կարգով: Էր մեռնելու տարին—ասում է բժիշկ
հեղինակը—կոմսը իրան հաշուում էր մօտաւո-
րապէս 64 տարեկան, այնպէս որ, եթէ նա ինքը
չէ սխալվել, կը նշանակէ որ ծնվել է ոչ թէ
1826 թվին, ինչպէս առհասարակ ցոյց են տա-
լիս ուրիշ կենսագրական տեղեկութիւնները, այլ
1825, նոյն իսկ 1824 թվին: Նրա հայրը պատ-
կանելով հայ ազնւականների հին տոհմերից մէ-
կին, պարագայում էր վաճառականութեամբ և ու-
նէր ոչ մեծ, բայց ապահոված կարողութիւն:
Նա ունէր երկու որդի և շատ քիչ լուստաւորված
մարդ լինելով, հազիւ թէ ուղարկէր նրանց բար-
ձր ուսում ստանալու, եթէ զիպաւածով նա չը
մօտենար մի ինչ որ երկտասարդ սպայ Կէյ-
մենօվի հետ (կոմսը միշտ շնորհակալութեամբ
էր մտաբերում նրան), որը և յորդորեց Լօրիսի
հօրը չը խնայել փողը և տալ իր որդկանց ևւ-
րօպական ուսում: Երբ փոքրիկ Միքայէլը 11—
12 տարեկան դարձաւ, հայրը տալով նրան եր-
կու վաճառականի ձեռքը, որոնք այդ ժամանակ
առեւտրական գործերով դնում են Մօսկվա,—

խնդրեց նրանց իր որդուն տեղաւորել արեւելեան
լեզուների Լազարեան ձեմարանում... Լազարեան
ձեմարանում Լօրիսը ուսանում էր շատ լաւ և
պէտք է յետոյ մտնէր Մօսկվայի համալսարանը,
բայց շատ չար լինելով, մինչև իր ուսման ըն-
թացքը աւարտելը ձեմարանի մէջ, բռնկեց իր
մի չարութեան մէջ, որը և վճռական կերպով
աղդեց նրա ամբողջ ապագայի վրա, ստիպե-
լով նրան դիտակալել խաղաղ շահիղը փոխարի-
նել պատերազմականի: Աշակերտական մի չա-
րութեան համար հեռացնելով երեխային ձեմա-
րանից, թոյլատրում են նրան, ուսումը շարունա-
կելու համար դնալ Պետերբուրգ, ուր և նա մեռ-
նում է «Гвардейскихъ подпрапорщиковъ» ու-
սումնարանը: Ահա այդպիսի անախտունի կեր-
պով երկտասարդ Լօրիս-Մելիքով վերափոխվում
է զինուորականի:

Լօրիսի կեանքի այդ զինուորական չըճանք—
չարունակում է հեղինակը իր պատմութիւնը—
հազիւ թէ կարելի լինէր մի աչքի ընկնող բան
պատմել, եթէ չը լինէր նրա ծանօթութիւնը բա-
նաստեղծ Նեկիւրսօվի հետ, դա տեղի ունե-
ցաւ 1841 կամ, աւելի ճիշդը, 1842 թվականին:
Նեկիւրսօվ այդ ժամանակ սրբազրում էր «Բե-
պերմուսար և Պանտօն» հանդէսը և զետեղում
էր նրա մէջ իր վատ վարձատրվող ոտանաւոր-
ները: Նեկիւրսօվ արդէն այդ օրից սաստիկ սի-
րում էր ոտանաւորները զրելը, բայց սովորական,
միջակ ոտանաւորների շարքից նրանք չէին բարձ-
րանում. Լօրիսի խօսքերով, շատ դժուար էր են-
թողել, որ նրանից ապագայում կարող էր կազ-
մակերպվել այն մեծ, զօրեղ բանաստեղծական
տաղանդը, ինչպէս էր յետոյ Նեկիւրսօվ:

Մի քանի տարուց յետոյ Լօրիսը կրկին պա-
տահել է Նեկիւրսօվին: Դա նրանց վերջին տե-
սակցութիւնն է լինում. Լօրիսը մինչև 1878 թվ-
ականը մնում է Կովկասում, իսկ Նեկիւրսօվ
վախճանվում է 1877 թվին: Եւս դիտմամբ պատ-
մեցի մանրամասնաբար—գրում է հեղինակը—Լօ-
րիսի և Նեկիւրսօվի յարաբերութիւնների մասին,
որովհետև նրանք կարող են թէ մէկի և թէ միւ-
սի կենսագրութիւնները գործնական մեծ ծառա-
յութիւն մատուցանել, իսկ միւս կողմից, բա-

ցատրել այն սէրը դէպի պօզիտիւն և գրականու-
թիւնը, որը տաժում էր Լօրիսը և որը նրան
այնպէս մարդասէր էր դարձրել, չը նայած
նրան Կովկասում չըճապատած դաժան և պատե-
րազմական պարագաներին: 1847 թվականին
Լօրիսը նշանակվում է Կովկասում, կուսակալ իշ-
խան Վօրոնցովի մօտ:

Խօսելով Լօրիս-Մելիքովի Կովկասում ապրելու
մասին, հեղինակը ասում է. «Էր Կովկասը նա
չափազանց սիրում էր, բայց սիրում էր միայն,
ինչպէս Ռուսաստանի մի անբաժան մասը. ես
չափ անգամ եմ լսել նրա գանգատները այն
մասին թէ ռուսները, իրանց յատուկ անտարբե-
րութեամբ, ոչինչ չեն ձեռնարկում, աւելի ան-
ձուկ կերպով կապելու համար Ռուսաստանին
հարուստ երկրի: Եւս կաւելացնեմ միայն, նոյն
իրան կոմսի բերանից, որ Կովկաս դալը նրա
մէջ բաղդաւոր փոփոխութիւն մտցրեց թէ նրա
ինքնակրթութիւնը և թէ նրա ընդունակութիւն-
ները կազմակերպելու համար»: Վօրոնցով և
նրանից յետոյ կոմս Մուրաւյով-Վարսկի, նկա-
տելով երկտասարդ ընդունակութիւնները, տա-
լիս էին նրան բաւական դժուար և բարդ
յանձնարարութիւններ, որոնք դուրս էին կան-
չում կոմսի մէջ հետաքրքրութիւն դէպի աւե-
լի կենսական, միտք-դարգացող խնդիրները: Բա-
ցի դրանից՝ իր հօրեղբայրը, բժիշկ Ախիլեյով,
լաւ լուստաւորված և լուրջ մարդ լինելով, տեսնե-
լով իր կողմից Լօրիսի ընդունակութիւնները,
անդադար, տոկունութեամբ յորդորում էր նրան,
որքան կարելի էր շատ կարգաւ, իր մտքի հօրե-
ղունը լայնացնելու համար: Լօրիսը միշտ երախ-
տադիտութեամբ էր յիշում այդ օրերը, որովհետև
այդ օրերից է սկսում շարժվել նրա մէջ կրթը
դէպի գրքերը, այդ օրերից է նա սկսում քաղել
նրանից աւելի խելացի հայեացքներ կենսի վե-
րաբերմամբ և ստանալ ամենախառակ վայելու-
թիւն: Դրա հետ առաջ էր ընթանում նա և իր
ձառնայական ասպարէզի մէջ և 1854—55 թվա-
կանների պատերազմը հասցնում է նրան մի այն-
պիսի հաշակի մէջ, որ, Կարսը վերցվելուց
յետոյ, յանձնվում է նրան Կարս բերդի հրամա-
նատարի ամենամանր պաշտօնը Կուրից առաջ

նշանակած լինելով Նիւնա Իվանօւօվի ա
Արդու թիւս կի-Գօլգօրօւօվի հետ,
նա Կարսից խնդրում է երկշաբաթայ արձա-
կուրդ, գնում է, պսակվում և վերադառնում է
կրկին իր տեղը իր երկտասարդ կնոջ հետ:

Կոմսի մասին մինչև նրա Պետերբուրգից հե-
ռանալը արտասահման հեղինակը ոչինչ չէ ասում
1881 թվականից սկսած—այստեղից է սկսում իր
պատմութիւնը հեղինակը—կոմսը այլ ևս գործե-
րի մէջ չէր և խախտված ներվերով հանգստանում
էր արեւմտեան Եւրոպայի մէջ: Անցնելով 1883—84
թվականների ձմեռը Պետերբուրգում, դարձնը
սկսվելուն պէս, կոմսը նորից ուղևորվում է
արտասահման, դէպի Վիսթղեն՝ Նիցցա անց-
նելու համար: «Նա դնաց արտասահման—ա-
սում է յօդուածագիրը,—ոչ թէ իր բարի կամքով,
ինչպէս դա պնդում են շատերը, մեղադրելով նը-
րան ճանապարհամոլութեան մէջ, այլ բժիշկ
Բոտկինի խորհրդով, իր քայքայված առողջութիւ-
նը վերականգնելու համար»:

Չը նայած իր տիպիական հայկական արտաքի-
նին՝ նրա ներքին բնաւորութեան մէջ այլազգու-
թիւն չը կար. խօսում էր նա չափազանց զիզե-
ցիկ ուսաց լեզուով, մշակված գրականական լե-
զուի կրիքով, թէև երբեմն իր խօսակցութեան
մէջ խառնում էր հասարակ անգրական բառեր,
ուսաց գրականութեանը նա հետևում էր ամե-
նամեծ սիրով: Դինչև վերջին օրերը իր յիշողու-
թեան մէջ նա վառ պահում էր Պուշկինի, Լեո-
մոնտօլի, Նեկիւրսօվի և ուրիշների ոտանաւորնե-
րից շատերը և յաճախ իր խօսակցութեան մէջ
էր բերում. սիրում էր նմանապէս մէջ բերել և
Վալտիկովի սրամիտ դարձաւածները, որի ի միջի
այլոց, ջերմ երկրպագուն էր նա:

Շարունակելով գմագրել կոմսի բնաւորութիւ-
նը՝ հեղինակը ասում է, իր Կովկաս հայրենիքը
նա թէև սիրում էր ջերմ սիրով, բայց այդ սէրը
յետ էր դրված նրա սրտի մէջ, իսկ առաջին տե-
ղը բռնում էր Ռուսաստանը, ինչպէս ամբողջու-
թիւն, և այդ կողմից կոմսին համարձակ կարելի
է անուանել ռուս պատրիօտ: Ոչնչով չը զանա-
զանվելով լուստաւորված ռուս մարդուց, կոմսը,
սակայն, զուրկ էր նրա մի աղգայնական պակա-

հրապարակը, ուր ահա ի տես ըաղմութեան, ար-
հեստաւոր երկտասարդները խաղում են իրանց
սպորդական խաղերի նման խաղերը և ծեր ար-
հեստաւորները նայում են՝ նստած մի օրոշ տե-
ղում:

Ել չեմ յիշում «Էմբեր» խաղի մասին, որը
լաւ վաղեմիում է նրանց. սոսկալի է «Թուրա»
խաղը, այդ խաղի մէջ ամենքը ուսում են չուա-
նի ոլորածից իջեցրած մարմին կապտեցնող հա-
րուածը, որը արագութեամբ միմեանց են խփում
խաղացողները:

Հետաքրքիր է այդ խաղը, նկարագրում ընդ
համառօտ կերպով: Մէկը վերցնում է ձեռքը ո-
լորածը, կանգնում է մի քայլաչափ միմեանցից
հեռու զծռած երկու գծերի միջտեղը. դալիս է
միւսը, կոխում է առաջին գիծը և եթէ այդ գի-
ծը կոխելուց յետոյ չը կարողացաւ փախչել միւս
գծի վրայով՝ մէջքին կուտէ մի սոսկալի հա-
րուած. սակայն հարուած տուող էլ հարուածը
տալուց յետոյ պարտաւոր է ձգել ձեռքից ոլո-
րուածը և ձգելուց փախչել, քանի ետեւից եկողը
գետնից առած ոլորուածքով չէ դաղել նրա մէջ-
քը: Այսպէս շարունակվում է և երբեմն խաղը
այնչափ տաքանում է, որ այլ ևս հարուած ստա-
ցողը չէ զգում ոչինչ և անդադար հարուած է
տալիս և առնում... շատերը գիտմամբ վերադ-
կուն հանում և լրիկ չափիկով են մնում. հա-
րուածները ձայնը հեռուից իսկ լսվում է, և երբ
խաղը վերջանում է, կարելի է տեսնել ամենքի
մարմինների վրա բաղմամբ կապտած գծեր՝
մէջքի վրա ամեն ուղղութեամբ:

Շատ լաւ է քաւ ձգելու խաղը. պէտք է
մի ձեռքով վերցնել կէս պոզանոց քաւ և ցած

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԱԿՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

V

188.. սեպտեմբերի 1, Երդրում.

Բարեկամ.

Այսպիսի նամակներից յետոյ, չէ՛ր մտածում
թէ ինչու փոքր ինչ չեմ խօսում Երդրումի ար-
հեստաւորների, վաճառականների, ժողովրդեան
դաղման, արհեստների վրա և այլն:

Այս նամակս դրանց եմ նուիրում և պիտի դը-
րեմ այն բոլորը, ինչ որ գիտեմ և տեսնում եմ
միշտ:

Եթէ կայ Երդրումի մէջ ուսումնասիր, աղգա-
յին գործերի մէջ կղած զեղծումների համար
վշտացող, երբեմն օրոտումներ հանող, քաջ, եր-
բեմն յանդուգն—անհասկացող, երբեմն կատաղի-
անդուսպ, բայց օրինակելի աշխատող, ընտանիք
լաւ պահող, ապաստիստ, խմող ու քէֆ անող և
առողջ դասակարգ—դա էլ արհեստաւորների դա-
սակարգն է:

Արհեստաւորը առաւօտը շուտով մտնում է և-
կեղծի, անկեղծօրէն աղօթում է, լուացվում է
հիկեղեցու առան աղբիւրի ջրով, լաւ է հանում
դէպի տաճարի կողմը դառնալով, գնում է խա-
նութ և կորովի ձեռքերով վերցնում է անաղին
մուրճը, ծեծում է նա, երբեմն է թափում. չէ ըրծ-
նում ոչ քի առջև, եթէ միայն թուրք զափթիւն
չը դուռայ անտեղի կերպով և չը հայհոյէ նրան
(միայն այդ ժամանակ նա իր ընտանիքի օգտի

համար գլուխը ծռում, լսում է, սակայն ուղում
է կատարութիւնից տարբեր). նա ծախում է ան-
խաղախ... երեկոյեան խմում է մի քանի օղի,
գնում է տուն, ուտում իր ընտանիքի հետ և
այնտեղ նա հետաքրքրվում է թէ իր տղան դեպ-
քուցում է ինչ է ունեւ... Վայ ուսուցիչներին, եթէ
իր տղան մի վատ բան է ունել, նա միւս օրը
կը թողնի իր գործը, կը մտնէ իր տղայի հետ
ուսումնարան, քաղաքավարութեամբ տեսլին կը
հարցնէ պատճառները, և եթէ իրան ցոյց
տան, որ պակասութիւնը թաղական կամ ու-
սումնական խորհրդի կողմից է, նա կը վեր կե-
նայ՝ չուկան կերթայ, կը ժողովէ իր արհեստա-
կիցներին, կը գալ թաղական խորհրդարան և
բացատրութիւն կը պահանջէ՝ թէ ինչու դպրոցը
անկարգ է, թէ ինչու ինքը, որ հասարակ ար-
հեստաւոր է, թոյլ կը վճարէ տարեկան 5 ռ.
և Կիրակիսը կամ Մարկիսը, որ իրանից տասնա-
պատիկ հարուստ է, կը զլանայ վճարել 6 ռուբ-
լի թէ ինչու այս ինչ վարժապետը, որը լաւ
է դաս տալիս և նեցուկ չունի, ստանում է
սակաւ և միւսը, որ մի անպիտան ուսուցիչ է և
հարուստ նեցուկ ունի, ստանում է լաւ ուժիկ...
Թէ ինչու վերջապէս, ուսումնական խորհրդը
կազմված է իրանց գործից բոլորովին հասկացո-
ղութիւն չունեցող անձերից և այլն և այլն...
Եթէ չը լսեն, առանց այլ և այլութեան կը պա-
հանջի նորերի ընտրութիւնը և գործը առաջ կը
տանի:

Ամենից աւելի այցելում է դպրոցը արհեստա-
ւորը, հարուստի դպրոց ոտ կիսելը տեսնված չէ.
ամենից աւելի վատ առաջնորդին համարձակ
«Կորսուիլ մեր քաղաքից» գոչող արհեստաւորն

է. ամենից աւելի աղգային կալուածները պահ-
պանութեան, դպրոցի բարեկարգութեան նա-
խաձեռնողները միմիայն արհեստաւորներն
են:

Այս դասը կազմված է պղնձագործ, ներկա-
րար, զինագործ, ձուլիչ, կոշիկակար և դերձակ
արհեստաւորների երկտասարդ մասերից, իսկ ծե-
րերը կամ շատ հասակ առածները տալիս են
խորհուրդ երկտասարդներին և ուրախանում են,
երբ տեսնում են, որ երկտասարդները աշոգեցին
մի վատ առաջնորդ տաղաքի և կամ մի լաւ
թաղական խորհուրդ ընտրել:

Երդրումի արհեստների մէջ նշանաւորներն են
պղնձագործութիւն, ձուլագործութիւն՝ չինում են
բրոնզեայ գեղեցիկ իրեղէններ, և կոշիկակարու-
թիւն: Տաճկաստանի մէջ չը կայ մի այլ քաղաք,
ուր կարողանան չինել այդպէս լաւ, թելթել և
մաքուր պղնձեղէններ, զարդաւոր շամաղաներ,
թաւեր և այլն, կարել ամենասիրուն ձեռով ա-
մուր, դիմագիւն և էփան կօշիկներ, մանաւանդ
կրկնակօշիկներով...

Թէև կան դերձակներ, բայց ոչ երեւելի, սա-
կայն վատ էլ չեն կարում: Առհասարակ բոլորն
էլ օրինակելի ջանասէր են, մինչև երեկոյ ան-
նելով գործում են արագութեամբ. նրանց նայո-
ղը զուարթանում է և ամաչում է, եթէ չի գործ
ինչ զանաղ է և գործից զվոյր:

Իսկ երբ դալիս է տօն կամ կիրակի օր, այն
ժամանակ դեմ եկեղեցու մօտ ընդարձակ դե-
րեղմանատունը և նրա հովատուն ծառերի տակ
մեծ բաղմութիւն կանանք և մարդկանց մէջ
փոքր ինչ պոյոյտ անելուց յետոյ՝ մօտիւ լայն

մեր դատ կամ բարոյական կորստից են: Այսինքն ինչպէս որ դատարանէն ուղե-
ցին հարցաքննուող համար, բայց նորէն յետա-
ձգեցին. դեռ եւս մինչև այսօր հարցաքննուած չէ:
Թէև առաջին ներկայացուած դատն Արտիսի
ընտանեաց դատն է: Թորոքեան Արտիսի էֆէն-
տին փաստաբան կարգուած է այն ընտանեաց
կողմէ, որոց մեծ հայրն է մայրն սպանելէ յետոյ
դիակներն կտոր կտոր ըրած էր Մուսա Գ. Զօհ-
րապէ Էֆէնտին: Եւ փաստաբան կարգուած է Մա-
ցուց դատին: Կը լսուի թէ, թէև հաստատուած
չենք կարող տեսլ, Մուսաի կողմէն փաստաբան
կարգուած է նաև հայազգի փաստաբան Սարա-
ճեան Թորոք Էֆէնտին:

ԱՐԻՈՒՆԻՅԱՆ մեզ գրում են. «Արդունցի մի
թուրք երիտասարդ՝ Մուսաբաբ անունով, որ իր
արած մի քանի ոճրագործութիւններէ անկողի փա-
խած և թիւրքաց երկրում ապաստան էր գտած,
զաղտնի գալիս է և սեպտեմբերի 15/16 զինքը
և փախուցում է Թիւրքիա Արդունցի քաղաքը Սիւրմա
Անոնի անուամբ 16 աստիկան մի հայուսա-
ւորական աղջիկի Սրա հօր և մօր լաց ու կոծին
սիրտ պէտք է, որ զիմանայ: Արդունցի հայերէն
այս յափշտակութիւնը առհասարակ մեծ վնաս
և յուսահատութիւն է պատճառու: Միշտ ի նկատի
ունեն, այն հանգամանքը, որ քաղաքը հինգ
թիւրքաց տանիքի վրայ է, և կարող է ամեն
զէպտուած փառնող սպանող իրանց կեանքին: Ինչ-
պէս լսում ենք, տեղական իշխանութիւնը բան-
տարկել է օրիորդին յափշտակող փախուցական
Մուսաբաբի հօրը և եղբորը:

Պետական կառավարման միջնորդութիւնը խն-
դել է պետական իրաւագրէ թուրք տալու, որ Բե-
սարաբաբալու հինով մի գինեգործական զարդոց
և օրինակի պահանջ գինեգործ պահելու համար
Ղրա համար հարկաւոր է 80 հազար բուրլի: Յի-
նանները միջնորդութիւնը համաձայնել է այդ
զուտաբար տալու:

Յիւսիսեանի դէմ կուսելու և առհասարակ այդ
հիւանդութեամբ վարակուած խաղողի այգիները
հետազոտելու և դրա դէմ միջոցներ ձեռն առնե-
լու համար այս տարի Պետական կառավարման
միջնորդութիւնը որոշել էր ծախսել 100 հազար
բուրլի: 1890 թվականի համար խնդրում է տալ
200 հազար բուրլի: Այդքան ահազին գումար
պահանջելը պատճառաբանուած է նրանով, որ
այս տարի Բուրլիայի նահանգում ֆիւսիսեանի
մեծ տարածում է նկատուել:

ԵԿԱՏԵՐԻՆՍԿԱՅԻՆ մեզ գրում են, սեպտեմբե-
րի 27-ից. «Աստուծանի թեմի առաջնորդը,
Գեորգ Եպիսկոպոս Սուրենյանց, սեպտեմբերի
22-ին հասաւ այստեղ: Կիրակի օրը սրբազան
տեղի Աստուածածնի եկեղեցում պատարագի
խորհուրդը ինքը կատարեց, զինչանկով ժողովը-
ղի խնդրին: Սուրբ պատարագին ներկայ էր մեծ
բազմութիւն: Սրբազանի ողորդած քարոզը մեծ
ազդեցութիւն արաւ հանդիսականներին վրայ: Քա-
ղողի կենդանի խօսքերին ժողովուրդը ծարաւած
մարդու նման, ամենայն փափագով լսում էր:
Լաւ կը լինէր թէ եկեղեցու քահանաները, սըր-
բազանի օրինակին հետեւելով գոնէ ամիսը մէկ
անգամ քարոզ կարդալով ժողովուրդին, օրին կան-
քի մանրակրկիտ հաշիւները ստուգելու են դե-
պի եկեղեցին: Սպասում ենք, զուգէ սրբազան
հօր օրինակը ազդէ ստորագրեալների վրայ: Պա-
տարագից յետոյ սրբազանը հրաւիրվեց պ. Թորո-
սեանի տունը ճաշի, ուր և եկաւ տեղիս տղայոց
կէստիական զինամարտի տեսուչը և խնդրեց
սրբազան հօրը ներկայ դնուիլ զինամարտի օր-
նութեան ծիսակատարութեանը երկուշաբթի օ-
րը: Սրբազանը շնորհակալ եղաւ տեսչի առա-
ջարկութեան համար, որովհետև միւս օրը, երկու-
շաբթի, նա ճանապարհ պիտի ելնէր դէպի Մոզ-
զով:

ՍՂԱՄԻՅԱՆ մեզ գրում են. «Մինչդեռ ամեն
տեղ շատերը աշխատում են սէր և համարաշխու-
թիւն ցնել երկու հարկան աղքատի—հայերի և
վրացիների մէջ, Սքնախի վրաց չաղապները
կարծէք հակառակ են այդ մտադրութեան և ա-
մեն կերպ ջանում են դրա հակառակն անել:
Այդ պարունկերը կարծում են, որ իրանց աղքա-
կիցներին պաշտպանելու համար հարկաւոր է
այլ աղքատներն կտորէն ատել և ճնշել երբ, ոչ
նրանց ձեռքին է: Պատիւ չէ բերում մանաւանդ ին-

տելիւնցիային երկպառակութեան գործին ծա-
ռայել, փոխանակ նպաստելու երկու աղքի տը-
ղէտ ամբողջի համերաշխութեան գործին:

«Донецк, Печела» լրագրի մէջ կարդում ենք.
«Սեպտեմբերի 22-ին Նոր-Նախիջևանում հեռա-
գիր ստացվեց, թէ կարճ ժամանակեայ հիւան-
դութիւնից յետոյ վախճանվեց Բեսարաբիայի թեմ-
ի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Սաղի-
նեան: Այս օրերս Նախիջևանի հայոց եկե-
ղեցին երկու հոգեհանգիստներ կատարվեցան հան-
գուցեալի համար»:

Մեզ հաղորդում են ԵԿԱՏԵՐԻՆՍԿԱՅԻՆ հետե-
ւալը. «Գաւառիս գիւղերում, բայց մասկական
աւերիչ հիւանդութիւններից, որոնք բազմաթիւ
զոհեր են տանում, սաստիկ տարածված է և եր-
ջիւրաւոր կենդանիների հիւանդութիւնը այն առ-
տիճանի, որ քաղաքին մօտ գտնվող գիւղերից
մէկում անասնաբույժը ստիպված է եղել մի օ-
րում 70 զուլու տաւար մորթել և այրել տալ.
հաս թէ ինչ դրութեան մէջ ենք գտնվում առ-
այժմ: Վերջինից զմեզ զգուշացրել են փոխա-
րէն բնութիւնը խզմանը է մեզ, պարզեցնելով այս
տարի ցորենի, խաղողի և բանջարեղէնների ա-
ռուտ և լաւ հունձ, որի պատճառով չքաւոր դա-
սակարգը կարողանում է փոքր ինչ ազատ չունչ
քաշել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հանրապետական կառավարութիւնը յաղթու-
թիւն տարաւ,— և միապետականների ու նրանց
արքանակ Բուլանժանների բոլոր յոյսերը՝ տա-
պալելու այժմեան կառավարութիւնը, — օրը ցըն-
դեցին:

Այժմ արդէն մեր ձեռքի տակ եղած ճիշդ
թւերը ցոյց են տալիս, թէ ինչ կազմակերպու-
թիւն պէտք է ունենայ Փրանսիական նոր պար-
լամենտը: Ընդհանուր կերպով առնելով՝ ընտր-
ված են 362 հանրապետականներ և 205 հանրա-
պետութեան հակառակորդներ: Այդ արդէն բա-
ւական է ցոյց տալու համար, որ մեծամասնու-
թիւնը այժմեան կառավարութեան կողմն է:
Հայտարար է, որ պարլամենտում հանրապետ-
ական կառավարութեան կողմնակիցների թիւը մի-
փոքր պակաս է, քան հին պարլամենտում, բայց
այդ տարբերութիւնը իր աննշան լինելուն հա-
մար, չէ կարող աղղել կառավարութեան գործե-
րի վրայ, և բայց դրանից միանգամայն չէ համա-
պատասխանում միապետականների և բուլան-
ժանների ունեցած յոյսերին: Միապետական-
ները միացած արկածախնդիր գնեւորի կուսա-
կիցների հետ երկուր ժամանակ աղմուկ բարձրա-
ցրին, խօսեցին, գոռացին, սարգիւն տեսան, և
մերժեց պարլամենտ կեցելն, ապալելով խոտո-
ւանել, որ աղղը Փրանսիական այժմեան կառա-
վարութեան կողմն է, և երբեք չէ կամենում թույլ
տալ, որ երկրի ղեկը անցնի արկածախնդիրների
կամ միապետական տարրերի ձեռքը:

Այդպէս ուրեմն այժմեան ընտրութիւնների
հետեւանքներից գոհ է կառավարութիւնը,— և
Տիւրքիայի միջնորդութիւնը պարծանքով կարող է
տանել, որ իրան աջողվեց յաղթութիւնը տանել:

Մի բան միայն այժմեանից նախատեսել կա-
րելի է, այդ արմատականների և հանրապետու-
թեան լիցենզիաները դաշնակցութիւնն է, որը կա-
րող է կայանալ և նեղ դրութեան մէջ դնել կա-
ռավարութեան այժմեան ղեկավարներին: Պար-
զենք մեր միտքը, ընտրված չափաւոր հանրապե-
տականները թույլ աւելի շատ են, քան թէ միա-
պետականները և բուլանժանները միասին: Նոյն
չափաւոր հանրապետականները թույլ աւելի են,
քան թէ արմատականները առանձին վերցրած:
Բայց միապետականները և արմատականները միա-
նայով, թույլ աւելի են, քան թէ չափաւոր հան-
րապետականները: Արդ, ինչ է դուրս գալիս դը-
րանից: Գրանցի դուրս է գալիս այն, որ եթէ մի օր
և է հարցում միապետականները և արմատական-
ները միանան, կարող են յաղթել չափաւոր հան-
րապետականներին: Իսկ այդպիսի հարցերից ա-
ռուտանձը՝ սա հիմա երբ որ և է մի օր քաշ-
նում է և մեր հարցն է, որի վերաբերմամբ միմե-
անց հետ համերաշխ են միապետականները և
արմատականները: Ճիշտ է, սահմանադրութեան
վերաբերմութեան ընթացքում միապետականները

և արմատականները համերաշխ լինել չեն կարող,
բայց խնդրը նրանումն է, որ այդ երկու կուսակ-
ցութիւններն էլ համակարծիք են սահմանադրու-
թիւնը վերաբերելու գործում և այդ արդէն բաւա-
կան է, որ կառավարութեան այժմեան ղեկավար-
ները նեղ դրութեան մէջ ընկնեն, որ և կարող
է նոր փոթորիկների առկա չափ նոր պարամու-
տուն: Յանկալի է, ի հարկէ, որ արմատական
կուսակցութիւնը ոչ մի աջակցութիւն ցոյց չը-
տայ միապետականներին, որոնց զլխաւոր նպա-
տակը նոյն իսկ սահմանադրութեան վերաբերու-
թեան վերաբերմամբ շատ պարզ է, և համակցելի
չէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պրինց Ֆերդինանդ Կորբուրգեանին Բոլդարիայի
թագաւոր հռչակելու միտքը աւելի է ար-
ժարձուած այժմ: Պրինցը մտադիր է շուտով
ամուսնանալու գերմանական պրինցուհիներից
մէկի հետ,— կարծում են, որ այդ անկողնի նա-
միտք ունի Գերմանիայի բարեկամութիւնը և ա-
ջակցութիւնը ձեռք բերել:

Գերմանական կայսերական զոյգը պէտք է
ուղևորվի Խառլիս, ինչպէս գրում են Բեռլինից,
հոկտեմբերի 8/20-ին:

Պարլիկ գերմանական զեպպանը շնորհաւոր-
ել է իր կառավարութեան կողմից Փրանսիա-
կան արտաքին գործերի մինիստրին՝ պարլամեն-
տական վերջին ընտրութիւնների աջող վախճա-
նը:

Լուր կայ, որ դուռը Վիլհելմ կայսրը և Պա-
րիսի գնաց:

Բեյզադից գրում են, որ Նատալիա Թա-
գուհին կորագրել է, որ Օգոստոսից բերվին իր
բոլոր իրենցները: Եթէ այդ փաստը ճիշդ է, կը
նշանակի, որ նա մտադիր է Բեյզադից չը հե-
ռանալու:

Բոլդարական սինդիկատները ընտրու-
թիւնը, որը կայացել է այս օրերս, աջող է կառա-
վարութեան համար. հակա-կառավարական հո-
գեւորականները չեն ընտրված:

Յայտնի բոլդարական գործիչ Սոյանովի
հակառակորդները լուր են տարածում, որ իրեն
թէ նրա մահաւանդից յետոյ մնացել է անազին
հարստութիւն: Եթէ խոսքը ճիշդ է, որ այս լուրը
ճիշդ չէ և միայն նպատակ ունի ստուեր գցել Սոյ-
անովի վրայ, ցոյց տալով նրան իրեն փողոսէր
և շահաւէր մարդ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացի մի հացագործ մի արամիտ միտք է
յղացել, այն է չինիւ լուսնու լրացումը: Դա մի
թիւն է, չինիւ լուսնու, որի վրայ շօղու աղմուկ
տպագրուած են օրայ նորութիւնները: Յանկաց-
ող առնելով այդ թիւնը՝ կարող է, և կարողա-
լուց յետոյ կարող է ուտել, քանի որ շատ էլ հա-
մալ է լինում:

Յայտնի չէ միայն, արդե՞ր գերամարս է այդ
տեսակ գրականութիւնը:

Բաւարական թագաւոր Լուդվիգ II-ի պարտքը
մինչև այժմ էլ չէ վճարված, թէև վաղուց արդէն
սկսել են վճարել: Այդ պարտքը այնքան մեծ է,
որ չը նայած որ անդադար վճարում են, բայց
մինչև 1905 թվականը հազիւ կը վերջանայ, եթէ
պարբերաբար վճարեն որոշած գումարը:

Ունգարական հոգեւոր սեմինարիաներից մէկում
նորերս պատահել է հետեւեալ տարօրինակ դէպքը:
Վերջերս սեմինարիան ստաւ մի պատանի, որի
քաղաքակրթական փորձը և գեղեցիկ դէմքը շատ
սիրելի դարձրին նրան թէ ընկերների և թէ վար-
չութեան աչքում: Մի անգամ երեքսուսաբալ աշա-
կերտը անցնելով կարդինալի մօտով մօտացաւ
համբուրնի, ըստ սովորականին, նրա ձեռքին: Այդ
բանը դուր չեկաւ կարդինալին. նա կանչեց իր
մօտ այդ աշակերտին և սկսեց հարց ու փորձ ա-
նել նրա նախնի կրթութեան մասին: Համակրե-
լի պատանին չիմտեց և իրան կողմից, այդ բա-
նը կասկածի առիթ տուցաւ, և վերջը յայտնեց,
որ նա աղջիկ է, մի շատ գեղեցիկ աղջիկ, որը
շատ անգամ այն միտքն էր յայտնել թէ ուղևոր
է քահանայ լինել: Բայց գաղտնիքը բացվեց:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 հոկտեմբերի: Գերմանական
26-ից մինչև յունիս 6-ը Ռուսաց կայսերական
Տեխնիկական ընկերութեան մէջ կը գումարվի

Տեխնիկական և Պրոֆէսիոնալ կրթութեան գործում
աշխատողների ժողովը:

ՈՒՋՈՒՆ-ԱՊՐԻ, 2 հոկտեմբերի: Կամարով Թիֆ-
լիս ուղևորվեց: Անդրկասպեան շրջանի կառավա-
րութիւնը և զորքերի հրամանատարութիւնը յան-
ձնված է գեներալ Աննիկովին:

ԲԵՐԼԻՆ, 2 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը և
Մեծ Խշխան Գեորգի Ալեքսանդրովիչ Դարձա-
տեղութիւնը և զորքերի հրամանատարութիւնը յան-
ձնված է գեներալ Աննիկովին:

ԲԵՐԼԻՆ, 2 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը և
Մեծ Խշխան Գեորգի Ալեքսանդրովիչ Դարձա-
տեղութիւնը և զորքերի հրամանատարութիւնը յան-
ձնված է գեներալ Աննիկովին:

ԲԵՐԼԻՆ, 2 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը և
Մեծ Խշխան Գեորգի Ալեքսանդրովիչ Դարձա-
տեղութիւնը և զորքերի հրամանատարութիւնը յան-
ձնված է գեներալ Աննիկովին:

Պրինց Ֆերդինանդ Կորբուրգեանին Բոլդարիայի
թագաւոր հռչակելու միտքը աւելի է ար-
ժարձուած այժմ: Պրինցը մտադիր է շուտով
ամուսնանալու գերմանական պրինցուհիներից
մէկի հետ,— կարծում են, որ այդ անկողնի նա-
միտք ունի Գերմանիայի բարեկամութիւնը և ա-
ջակցութիւնը ձեռք բերել:

Գերմանական կայսերական զոյգը պէտք է
ուղևորվի Խառլիս, ինչպէս գրում են Բեռլինից,
հոկտեմբերի 8/20-ին:

Պարլիկ գերմանական զեպպանը շնորհաւոր-
ել է իր կառավարութեան կողմից Փրանսիա-
կան արտաքին գործերի մինիստրին՝ պարլամեն-
տական վերջին ընտրութիւնների աջող վախճա-
նը:

Լուր կայ, որ դուռը Վիլհելմ կայսրը և Պա-
րիսի գնաց:

Բեյզադից գրում են, որ Նատալիա Թա-
գուհին կորագրել է, որ Օգոստոսից բերվին իր
բոլոր իրենցները: Եթէ այդ փաստը ճիշդ է, կը
նշանակի, որ նա մտադիր է Բեյզադից չը հե-
ռանալու:

Բոլդարական սինդիկատները ընտրու-
թիւնը, որը կայացել է այս օրերս, աջող է կառա-
վարութեան համար. հակա-կառավարական հո-
գեւորականները չեն ընտրված:

Յայտնի բոլդարական գործիչ Սոյանովի
հակառակորդները լուր են տարածում, որ իրեն
թէ նրա մահաւանդից յետոյ մնացել է անազին
հարստութիւն: Եթէ խոսքը ճիշդ է, որ այս լուրը
ճիշդ չէ և միայն նպատակ ունի ստուեր գցել Սոյ-
անովի վրայ, ցոյց տալով նրան իրեն փողոսէր
և շահաւէր մարդ:

ԼԻԻՎԼԻՎՍԿԱՅԻՆ, 2 հոկտեմբերի: Երեկ երե-
կոյեան այստեղ հասաւ Թագաւոր կայսրը, Մեծ
Խշխան Գեորգի Ալեքսանդրովիչի հետ, Մեկնեմ
բուրգ-Շվեյցարի պալատը այցելելու համար:

ԲԵՐԼԻՆ, 3 հոկտեմբերի: Կոմս Վորոնցով-Գա-
կովին շնորհված է Սև Արծի շքանշանը, իսկ գե-
ներալ Ռիտտերին՝ Կարմիր Արծի շքանշանի մեծ
խաչը:

ՎԻԵՆԱ, 3 հոկտեմբերի: Լուրերին նայելով
Կորբուրգեան պրինցը ամուսնանում է ոչ թէ ֆը-
րանսիական, այլ գերմանական պրինցուհու հետ:

ԼՈՒՐՈՒՆ, 3 հոկտեմբերի: «Daily News» լրա-
գրին հաղորդում են Վ. Պոլսից, որ Դաքի կղզան
աշխատում է որ իրան յետ կանչեն Կրիստի Կղզուց:

ԲԵՐԼԻՆ, 3 հոկտեմբերի: Թագաւոր կայսրը
ուղարկեց իշխան Բիսմարկին և նրա որդուն, իշ-
խան Վորոնցով-Գալկովին միջոցով, մի-մի շքեղ
ծխատուփ իր պատկերով: Թագաւոր կայսրի մօտ
եղած երեկվայ ճաշին պետական կանցլերը ներ-
կայ էր, և նրան փոխարինեց նրա որդին, կոմս
Հերբէրտ Բիսմարկ: Վիլհելմ կայսրը, Թագաւոր
կայսրին ճանապարհ գցելուց յետոյ՝ ուղղակի գը-
նաց պետական կանցլերի մօտ, որի մօտ մնաց
երկար ժամանակ:

ԿՈՊԵՆՀԱՂԵՆ, 3 հոկտեմբերի: Երեկ Դանիայի
Թագաւորական տունը տեղափոխվեց Կոպենհա-
գեն բնակութեան համար: Թագուհի կայսրուհին
Օդոտտափառ երեխաների հետ միասին և Դանիա-
յի թագաւորական զոյգը մեկնեցին Ֆրեդերիկ-
բորգի ժամը 3-ին կէսօրից յետոյ: Կոպենհագենի
կայսրանուս Թագուհի կայսրուհուն հանդիսաւոր
կերպով զիմարեց մեծ բազմութիւն: Այսօր ա-
ռուտեան Նորին Մեծութիւնը ուղևորվելու է
«Գերթալա» նաւով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 հոկտեմբերի: Աղգային լուսա-
ւորութեան միջնորդութիւնը յայտարարում է, որ
զարգացնելու աշակերտների ընդունելութեան ժա-
մանակամիջոցը լրացած լինելով, բոլոր խնդրե-
ները ընդունելութեան մասին կը թողնվեն ա-
ռանց հետևանքով:

ԼԻԻՎԼԻՎՍԿԱՅԻՆ, 4 հոկտեմբերի: Թագաւոր
կայսրը, Վալդիմիր Ալեքսանդրովիչ և Գեորգի
Ալեքսանդրովիչ Մեծ Խշխանները հետո՝ այսօր օր-

սին մասնակցեց, իսկ ժամը 1-ին վերադարձաւ այստեղ: Երեկոյեան Նորին Մեծութիւնը և Մեծ Իշխան Գեորգի Աւերապետը թողնցին Լիւդ-վիգստիւստ:

ԲՆԼԳՐԱՒԻ 4 հոկտեմբերի: Նախաժամ թագուհին պալատից ոչ հեռու մի տուն է վարձել, որ-տեղ և պէտք է բնակվի:

ՊԱՐԻՉ, 4 հոկտեմբերի: Կորուրդեան իշխանը եկաւ Պարիզ և այցելեց Մոնպանսիէ դուքսին:

Ս. ՊԵՏԵՐԲԱՐԴԻ ԲՈՐՍԱ

Հոկտեմբերի 3-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ—	96 ր. —
Բերլինի վրա 100 մարկ —	46 > 90
Փարիզի վրա 100 ֆրանկ —	38 > 10
Ոսկի — արծէ —	7 > 73
Մաքսային կուպոններ —	153 > 75
Արծաթ — — —	1 > 12
Բորսային դիվիդենդներ —	6 և 70%
Պետական բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	99 > 62
— — — 2-րդ —	99 > 75
— — — 3-րդ —	99 > 50
— — — 4-րդ —	99 > 50
— — — 5-րդ —	99 > 75
— — — 6-րդ —	99 > 50
Նոր 40% — — —	84 > 12
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99 > 62
— — — 2-րդ —	99 > 62
— — — 3-րդ —	99 > 87

Ներքին 5% առաջին փոխառութ.	261 > 50
— — — երկրորդ —	237 > 75
5 1/2% բէնտա — — —	101 > 75
Ոսկեայ բէնտա — — —	173 > 75
Ներքին 4% փոխառութ. փոխառ.	142 > 50
Նոր երկրորդային բէնտա — — —	99 > 50
50% զրաւակ. թղթեր կալուած.	
— — — փոխ. կրեդ. ընկ. մետ. — — —	149 > 50
— — — թղթադ. — — —	91 > 87
Գրաւ. թղ. Ալիւ. բանկի — — —	98 > —
Գլխավոր բանկի — — —	102 > —
60% զրաւ. թղ. թիֆլիսի—27 և 43տ. — — —	
— — — Բուխարայի—18 և 43տ. — — —	

Ս. Պետերբուրգի քաղաքային օրվ-գացիաներ 95 > — >
Մոսկվայի քաղաք. օրվ գացիաներ . . . 93 > 75 >
Օդեսայի — — — — — 94 > — >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. — — — > — >
Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուրի է:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

ՊԵՏԵՐԲԱՐԴԻ. Ա. Ղ. Չեր թարգմանական յո-դուածի մի քանի կարեր և հետաքրքրական կէ-տերի չը տպագրելը խմբագրութիւնից անկախ պատճառներով է: Չեր ամապրական մատենա-գրութիւն յոդուածը չի տպագրվի:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Մի ղերդաստան
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳԻՇԵՐՈՒԹԻԿՆԵՐ:
Դիմել հետեւեալ հասցեով. Սօլջակ Գանձակի փողոց, տուն Շադինեանցի № 25.
1—10

UN ANGLAIS donne des leçons de langue anglaise. S'adresser au bureau de la Rédaction du journal arménien le «Mschak».
АНГЛИЧАНИНЪ даетъ уроки англійскаго языка. Обратиться за адресомъ въ редакцію газеты «Мшагъ».
Մի ԱՆԳԼԻՍԻ տալիս է անգլիական լեզուի դասեր: Դիմել «Մշակ» խմբագրութեան:
1—10 (Հ.)

ԱՊՐԱՆՔՆԵՐ ՏԵՂԱԽՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ Է ՄԻ ՊԱՀԵՍՏ

Հատ էժան գնով Աբա-Աբադսի հրապարակի մօտ, Բօլշայա-Կրիվայա փողոցի վրա, տուն Բերինեանցի, № 12: Պահեստը գտնվում է բազի Ներսում:
3—3

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի տե-ղեկութիւն ընդհանրութեան, որ քաղաքային խորհրդարանը ի 29 սեպտեմբերի 1887 թւին, ի 15 օգոստոսի և ի 22 սեպտեմբերի 1889 թւին կայացրած վճիռներով կար-գադրել է.

- 1) Խորհրդարանի առաջինայ 1890—1894 քառամեակի ձայնաւորներ ընտրելու մասին կազմել քաղաքային ընտրողական ժողովներ, առաջին կարգի համար—9-ին և երկրորդ կարգի—11-ին յունվարի 1890 ամի:
 - 2) Երրորդ կարգի ընտրողներին բաժանել հինգ ուղիղ խմբերի. կանգնեցաներ առաջարկելու համար հրաւիրել կարգաւ այդ խմբերը—13, 14, 15, 16, և 17 յուն-վարի 1890 ամի, իսկ ձայնաւորներ ընտրելու համար—19, 21, 23, 25 և 27 նոյն իսկ յունվարի:
 - 3) 2-րդ պահանջել կալուածատէրերից նրանց կալուածները վրա 1864 թւից սկսած մինչ 1879 ամի մնացած քաղաքին հասանելի ապառիկները:
 - 4) 2-րդ պահանջել կալուածատէրերից այն տուգանքը, որ նրանք պէտք է վճարէին քաղաքի օգտին կալուածներին հասանելի 10% տուրքը իր ժամանակին չը վճարելու համար մինչև 29 սեպտեմբերի 1887 ամի, բացի այս չը պահանջել այս տեսակ տու-գանքը 29-ից սեպտեմբերի 1887 ամի մինչև խորհրդարանի նոր կազմակերպելը:
 - 5) Ընտրողական ցուցակներն աւարտել 1 հոկտեմբերի 1889 ամի:
 - 6) Վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակները յայտնել ի տեղեկութիւն ընդհանրութեան 1 նոյեմբերի 1889 ամի, բաժանելով քաղաքայիններին, նմանապէս կայնելով քաղաքի յայտնի տեղերում և խորհրդարանի դահլիճում 200 օրինակ տըր-ված ցուցակներ:
 - և 7) Քաղաքի բնակիչներին զանգառները ընտրողական ցուցակներին մէջ պատահած սխալների մասին ընդունել քաղաքային վարչութեան մէջ 1-ից մինչև 15-ն նոյեմբերի և այնուհետեւ, համաձայն 27 յօդ. քաղաքային կանոնադրութեան, ուղղված ընտրող-կան ցուցակները ներկայացնել խորհրդարանի հաստատութեան, անպատճառ մինչև 5-ն դեկտեմբերի 1889 ամի:
- Ընդ սմին քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում զգուշացնել քաղաքի բնակիչներին, թէ թէպէտ սոյն յայտարարութեան 5-րդ հատուածում յիշած ընտրո-ղական ցուցակներին աւարտման ժամանակամիջոցը խորհրդարանը նշանակել է 1-ն հոկտեմբերի 1889 ամի և այդ ընտրողական ցուցակներին մէջ, համաձայն 4-րդ ծանօ-թութեան 17-րդ յօդուածի քաղաքային կանոնադրութեան, անկարելի է մտնել քա-ղաքի այն բնակիչներին, որոնց վրա մինչև յիշեալ ժամանակը մնացած կը լինեն ա-պառիկներ քաղաքին հասանելի տուրքերից, բայց համաձայն հրամանի պետական սե-նատի 5-ին փետրվարի 1885 ամի, № 1312, որով բացառված է քաղաքային կանոնա-դրութեան 17-րդ յօդուածի իսկական միտքը, յիշեալ բնակիչները պէտք է մտնեն ընտրողական ցուցակներին մէջ 1-ն հոկտեմբերի 1889 ամի ժամանակից յետոյ էլ միայն այն պայմանով, որ նրանք վճարեն իրանց վրա մնացած ապառիկները մինչև այն ժա-մանակ, երբ քաղաքային խորհրդարանը վերջնականապէս կը հաստատէ ընտրողական ցուցակները:

3—3

ԲԺԻՇԿ ՊՐԵՕԲՐԱԺԵՆԱԿԻ

Մասնաւորապէս բժշկում է էլէկտրականութեամբ, ֆարադական և զարկանական հոսանքով ձեռքերի և ոտների անդամաւորութիւնից, բէլմատիզմից, ներվային հիւանդութիւններից և կօնտ-րակտուրայից (մկաններնրի անդամաւորութիւն), բժշկում է կոյրերին և խուլներին անդամաւոր-ծութիւնից և նոյնպէս ընդունում է կանացի հիւանդութիւններով և սիֆիլիսով տկարներին:
Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամ և երեկոյեան 7 ժամից մինչև 8 ժամ: Տուն Պոպովի Միքայէլեան փողոցի անկիւն № 9 և Նիսսովկայի փողոց № 2, ինտենդանտութեան մօտ, վ. օրօնցովեան կահաւորված սենեակների դիմաց:
Домъ Попова, уголъ Михайловской ул. № 9 и Елисаветинской № 2, около Интендантства, противъ Воронцовск. номеровъ.
8—14

ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՏԱՆ

Մի ԱՇԱԿԵՐՏՈՒՆԻ
ցանկանում է աշակերտունիներ պատրաստել: Հասցէն. Նորաշէնի փողոց, տուն Պարունքեզովի, № 8.
8—10

ՍՊԻՏԱԿԵՂԵՆՆԵՐ ՊԱՏՐԱՍՏՈՂ ԳՈՐԾԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻՐԵՆԵԱՆԻ
Պատրաստում եմ զանազան տեսակի բրթոտ կամ խաւով երեսաբերիներ և բաղնիօի համար ամեն տեսակի շորեր, շապիկ, փաթափվելիք մի-երեսանի, կամ երկու-երեսա-նի: Ընդունում եմ նաև պատուէրներ ձեռնառ զներով: Գործարանս գտնվում է Հաւ-լաբարում, հացի մագազինի դիմաց, տուն Սիրդակովի № 20: Իսկ իմ պատրաստած ի-րեղէնները կարելի է գտնել Սիօնի փողոցում, Արծրունի քարվանսարայում:
3—6

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ՏԱՆՏԻԿԻՆ ԵՒ ԽՈՀԱՆՈՑ

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՅ ԲԱՂԿԱՑԱԾ ԳԻՐԴԵՐ
Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն
400-ի չափ տեղական և եւրօպական աժան, համեղ և անմնաս կերակուրներ պատրաստելու եղանակ:
Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ր Դ
200-ից աւելի տնտեսական գիտելիք քաղցրաւենիք, թթուղէն, պտուղների, բանջարեղէնի և կանաչեղէնի պահպանելը և չորացնելը. կաթնատնտեսութիւն և զանազան գիտելիք:
Կազմեց Յ. ՄԵԼԻԻ-ԲԱՆՏԱՍԵԱՆՅ
ԳԻՆԵ Է 1 Բ. 50 Կ.
վաճառվում է բոլոր յայտնի գրաւաճառանոցներում և Մարտիրոսեանի տպա-րանում: վերջինիս մօտ 10-ից աւելի գնողին 10 տոկոս զիջում կը լինի:
5—8

ՊՐՈՎԻԶՈՐ Ա. ՇՏԷԻԹԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՍԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓԶԱՆԱԼՈՒ ԴԵՄ
ՊՐՈՎԻԶՈՐ ԱՍԱՄՆԵՐԻ ԿԱԹՈՒՆԵՐ 50 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՑԻՆԵԱՆ ԱՍԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՍԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.
ԳԼԽԱԽՈՐ ՊԱՀԵՍՏ.
ԹԻՖԼԻՍՈՒՄ. Կովկասեան դեղա-վաճառատան, և պ. պ. Շահ-պարոնեանցի, Մակկէրի, Սէնչի-կովսկու և Ագմուրովի դեղա-տներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍՈՒՄ Կօլօշեկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ, Բրոսնոցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕՒՐՈՒՄ:
33—52 (Հ.)

УБНЫЯ КАПЛИ: КОР. 50 К.

УБНОЙ ПОРОШОК: КОР. 30 К.

УБНОЙ ЭЛИКСИР: ФЛ. 80 К.

А. ШТЕКЕР

ԿՈՇԿԱԿԱՐԻ

Ա Ր Հ Ե Ս Տ Ա Ն Ո Ց

ԱՂԱՍԻ ՏԷՐ-ՉԱՔԱՐԵԱՆՑԻ

Գօլովինսկի, տուն Բէյտերի, № 11
Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ
Հախաւոր գներով Արհեստանոցում ծախվում են նոյնպէս տղամարդկանց և ՁԻՆՈՐԱԿԱՆ ամեն տեսակ պատրաստի կօշիկներ:
8—10 (Հ.)

